ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Ֆրի նյուզ» հեռուստատեսության 2021թ. հունիսի 20-ի «Ազատ լուրեր» հաղորդման ընթացքում հեռարձակված ռեպորտաժների կապակցությամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

2021թ. հունիսի 30-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիմումը «Ֆրի նյուզ» հեռուստաընկերության 2021թ. հունիսի 20-ի ժամը 17:28:57-17:47:39-ը հեռարձակած «Ազատ լուրեր» հաղորդման ռեպորտաժների կապակցությամբ:

Հանձնաժողովն ակնկալում է ստանալ Դիտորդ մարմնի դիրքորոշումը վերոնշյալ տեսալսողական հաղորդման ընթացքում լրագրողի, լրատվամիջոցի գործողությունների վերաբերյալ:

Հաղորդման ընթացքում լրագրողն ուղիղ եթերում 2021թ. ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների քվեարկության օրը, ընտրատեղամասերից մեկում ակնհայտորեն միջամտում էր ընտրական գործընթացին՝ ագրեսիվ վիճաբանելով թեկնածուներից մեկի վստահված անձի հետ կամ դիտողություններ անելով հանձնաժողովի նախագահին և այլն:

2020թ. հոկտեմբերի 30-ին «Ֆրի նյուզը» միացել է Հայաստանում լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնությանը և ստորագրել Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը:

Այդուհանդերձ, լրատվամիջոցը չի միացել ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագրին, որը 2021թ. մայիսի 14-16-ին, Դիլիջանում կայացած Ընդհանուր ժողովի ժամանակ արժանացել է դրան մասնակցած՝ Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների հավանությանը, որից հետո Հուշագիրը տեղադրվել է ԵՄԱ կայքում՝ բաց լինելով ստորագրման համար:

2021թ. հուլիսի 16-ին ԴՄ-ն նախաձեռնեց առցանց ձևաչափով դիմումի քննարկումը:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

7. Ազնվություն ընտրությունները եւ հանրաքվեները լուսաբանելիս

7.1. Բոլոր կուսակցությունների եւ թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող:

II. ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագիր

Գ. Պարտավորվում ենք լռության և քվեարկության օրը՝

- հնարավորինս խուսափել ուղիղ եթերով հարցազրուցներից ու հարցումներից, որպեսզի խոսակցի որևէ անզգույշ արտահայտություն, ակամա արտասանած բառ կամ թույլ տված վրիպում չդիտարկվի քարոզչություն և օրենքի խախտում,

- դիտորդի հետ հարցազրույցում հստակ նշել, թե որ կազմակերպությունից է հավատարմագրված,

- քվեարկությունը լուսաբանող լրագրողներին հորդորել, որ ընտրատեղամասում բանավեճերի մեջ չմտնեն հանձնաժողովի նախագահի, անդամների, դիտորդների, վստահված անձանց, քվեարկողների հետ, չմիջամտեն ընտրական գործընթացներին,

- լրագրողների օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտումների վերաբերյալ անմիջապես իրազեկել հանձնաժողովի նախագահին, իրավապահ մարմիններին, ԿԸՀ-ին և հանրությանը:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

գնահատելով, որ

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը շարունակում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի դիրքորոշումը ստանալու ակնկալիքով նպաստել երկրում լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության կարևորմանն ու ամրապնդմանը,

նկատի առնելով, որ

- հեռուստաընկերությունը միանալով հանդերձ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրին, չի ստորագրել ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագիրը, հետևաբար և չունի ուղղակի պարտավորություն կատարելու վերջինի դրույթները,

հիշեցնելով, որ

- Հուշագրի դրույթները բխում են Կանոնագրի կետերից և կոչված են նպաստելու ընտրությունների ժամանակ լրատվամիջոցների կողմից հավասարակշռված և պատշաճ լուսաբանման ապահովմանը,

- որ նախընտրական ժամանակաշրջանում բազմաթիվ էին նախադեպերը, երբ լրագրողներն առանց ակնհայտ անհրաժեշտության համառություն էին ցուցաբերում տարբեր միջոցառումների մասնակիցներից ստանալու իրենց հարցերի պատասխանները, ինչի արդյունքում ստեղծվում էին կոնֆլիկտային, այդ թվում՝ բռնության կիրառման իրավիճակներ։ Վերջիններն արձանագրված են լրագրողական կազմակերպությունների մի շարք հայտարարություններում,

արձանագրում է՝

1. Խնդրո առարկա ռեպորտաժում չեն հայտնաբերվել Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկայի կանոնագրի ակնհայտ խախտումներ։ Միևնույն ժամանակ դրանում առկա էին որոշ հակասություններ ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագրի մոտեցումների հետ, ինչն արժե գնահատել՝ ընդգծելու լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների զարգացման կարևորությունը։

ԴՄ-ն որոշում է՝

- Ելնելով վերոնշվյալ արձանագրումից՝ մշակել փորձագիտական կարծիք,

- թեպետ «Ֆրի նյուզ» հեռուստաընկերությունը միացել է ինքնակարգավորման նախաձեռնությանը և պարտավոր է հրապարակել իրեն վերաբերող ԴՄ եզրակացությունները, բայց ոչ փորձագիտական կարծիքները, կոչ անել լրատվամիջոցին՝ հրապարակելու սույն փաստաթղթի հիմնական դրույթները, ինչը կարող է նպաստել ներկայումս հաճախ հանդիպող համանման վեճերի կանխմանը:

ԴՄ-ն հորդորում է՝

- հեռարձակվող լրատվամիջոցներին՝ հետևել սեփական եթերներին, հատկապես ուշադիր լինել ուղիղ ռեպորտաժների նկատմամբ, և դրանցում լրագրողի կողմից պրոֆեսիոնալ էթիկայի կանոնների խախտումների առկայության պարագայում ողջամտության սահմաններում միջոցներ նախաձեռնել, ընդհուպ ուղիղ հեռարձակումը ընդհատել և տեղի ունեցածի մասին լսարանին ծանոթացնել խմբագրած տեսանյութով,

- ստորագրել և հետևել ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագրին, քանի որ կանոնների պատշաճ կատարումը կնպաստի պետության համար կարևորագույն միջոցառումներից՝ ընտրությունների հավասարակշռված և համարժեք լուսաբանմանը,

- Ինքնակարգավորման նախաձեռնության անդամներին՝ նկատի ունենալով վերոնշված միջադեպերը՝ լրամշակել Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը՝ դրանում ներառելով հատուկ նորմեր սադրանքի՝ որպես գործիքի նախապայմանների, թեժ, կոնֆլիկտային իրավիճակներում պատշաճ վարքագծի վերաբերյալ: Իսկ Կանոնագրի 7-րդ՝ «Ազնվություն ընտրությունները և հանրաքվեները լուսաբանելիս» բաժնում ներառել որոշ դրույթներ՝ հենվելով ՀՀ ԱԺ 2021թ. արտահերթ ընտրությունների լուսաբանման Հուշագրի առաջարկությունների վրա:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի

2021թ. հուլիսի 29-ի նիստում,

ԴՄ հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության

գլխավոր խմբագիր

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: